կանջս իւր գինաս ոսկիս . այն է՝ զուս-
կընդրուի բանի անծախսօս Աւետարանին .
և՛ի ձեռս իւր ապարանջանս . այս է՝ զբա-
րի գործս, և զգեղեցիկ կարգս, զմարտը
վարս և զանճաճոյ ուղիղ աւանդութիս,
Այս՝ որ մուսացաւ զժողովուրդ իւր և ըզ-
տուսն հօր իւրոյ, զի ցանկացաւ թագա-
ւորն գեղոյ նր՝ : Օ որոյ երեսս պաշտեն
մեծամեծք՛ի ժողովրդոց, որոյ ամ փառքն
են՛ի ներքոյ : Այս օրհնեալ՝ որ եղև ՛ի հա-
զարս և՛ի բիւրս : Այս՝ որ վնճակեցաւ ՛ի
հարսնութի սիրելի և միածին որդւոյն նյ
հօրն երկնաւորի : Այս սբ և դշխոյ պան-
ծալի . որ կայ ընդամէ երկնաւոր փե-
սային ՛ի հանդերձս ոսկեհուռս զարդա-
րեալ և պսակեալ : Թննդ . իմ . 2 : Կովէրն :
և սառ . իմ . 10 . Կովէրն : Վարձեալ՝ սբ
Աթոռս Աջմեածին՝ է կոյս գեղեցիկ, ո-
րում ցանկացաւ մեծն յակոբ՝ հովիւն
հսկող՝ ճշմարիտ և քաջ հովուին պատ-
կերն . և՛ի սէր նր կաթոգին եղեալ՝ այն-
քան աշխատեցաւ ամս չորեքսնն , մինչև
էսու զնա՛ի հարսնութի իւր : Թննդ . իմ . 18 .

Էջիկն սեղանոց օրինակն և խորհուրդքն :

Ինչև 'ի 30 : 'Վարձեալ՝ կոյս իմաստուն .
 որ զնորս իէլ զհայկածինս ազգ՝ Լ կու
 պաշտունեն անցոյց ծով . և զանմարտինն
 ընկղմեալ փարաւօն 'ի ծովն դժոխոց ,
 զյաղթականն երգէ օրհնուիս անէլէյ .
 ԺԵ . 20 . 21 : Կոյս՝ որ եղև հարսն ճշմու
 ըիտ և մեծ քահանայապետին յաւիտենից՝
 Լ կարգին մեւքիսեդեկի . որ սրբուի մե
 ղաց մեքոց արարեալ՝ նստաւ ընդ աջմե
 մեծուէ աթոռոյն յերկինս : սաղ . ճթ . 4 :
 Էբր . ան . 3 : Դ . 14 : Ղ . 20 : Ը . 1 : 'Վանզե՝
 և 'ի հին օրէնս քահանայապետն ոչ առնոյր
 զկին , բայց եթէ՝ զկոյս : զհաս . ին . 13 :
 Կոյս՝ բարի և գեղեցիկ տեսլեամբ . որ
 հաճոյ եղև թագաւորին երկնաւորի . 'ի
 ձեռս իւր և 'ի պարանոցն հառ զգաւա
 զանն ոսկի , զհայրապետական իշխանուին
 ասեմ , և զմայրուին հայկազեանս ազգի .
 'ի սենեակ նր եմուտ , և ընկալաւ 'ի գը
 լուխն զթագ պարծանաց . յորոյ շնորհս
 թղւորն զորդի հօր եղբօր նր զմուրթքէ
 փառաւորեաց . զերանելին ասեմ զսբն
 'Վրիգոր . ետ նմա զվաւերականն իւր , ք
 զարքայական մատանին . և զազգ նր զժո

ԳՊԷԼԷ Է ԸՍՊ ՈՒՆԵԼՅՈՒՆ

զով ուր դաս հայաստանեայց 'ի հոգևորն
 մահոճանէ փրկեաց : Էսթեր . Է . 7 : Գլխի ըն
 ը . 1 : Գլխի ըն . ԺԵ . 1 : Գլխի ըն : 'Սարձեալ
 կոյս՝ որ 'ի մեծութիս և 'ի զօրութիս , 'ի շնորհս
 և 'ի փառս առաւել եղև . և անցոյց զամ
 դաստերօք , այսինքն՝ զհամայն եկեղեցեօք :
 Գլխի . Է . 29 : Կոյս ճշմարիտ՝ որ 'ի խոր
 հոգևոր պատարագին ծնանի զընդ մեզ
 յայտնեալն ամ , ը դուշակուէ մարգա
 րէին : Էսայ . Է . 14 : 'Քանզի՝ կոյսն ոչ
 ծնանի , բայց եթէ՝ զամ . և ամ ոչ ծնա
 նի , բայց միայն 'ի կուսէ : 'Սարձեալ՝ կոյս
 իմաստուն՝ որ միանգամ զինքն պատրաս
 տեաց . և պայծառ հաւատոյ վառեալ
 լսպտերաւ 'ի յառագաստն լուսեղէն ը
 երկնաւոր փեսային եմուտ : Գլխի . Է . 2 .
 10 : 'Սարձեալ՝ մայր 'ԼԹուս մեր սբ
 'Ջմիածին՝ է կոյս իմաստուն , և հարսն
 լուսատեսիլ՝ որ ունի 'ի գլուխ իւր պսակ
 յերկոտասան սատեղաց : Գլխի . Է . 1 :
 'ԼԿինքն՝ զերկոտասան գերազանցութիս :
 զորոց երկուսն ունի 'ի յարարչական և 'ի
 նիւթական պատճառաց . քանզի՝ սբ
 'ԼԹուս 'Ջմիածին՝ 'ի ճարտարապետէն

Էջնն սեղանոց օրինակն և խորհուրդն :

ամցեն, ՚ի միածին Որդւոյն ւնյ յօրինեցաւ
 երկնային պայծառ լուսով: Եւ զէր-
 կուսն ունի՝ լն տեղւոյն և լն դրուէն.
 Իբր զի՝ կառուցաւ ՚ի հայաստան Տի, ՚ի
 յարարատեան վայելուչ դաշտի, ՚ի յար-
 քայանիստ վաղարշապատ քաղաքի, ուն
 երկինք ՚ի յերկրի. կամ ուն դրախտ վափ-
 կուէ, և նոյի երկրորդ տապան. կմ իբրև
 ոսկիաձող աշտանակ Էօթնաջահեան.
 Ժննդ. ւն. 8 : ք. 8 : զ. 14. զար. 7. 2 :
 Խորհրդաբար խաչաձև հիմնարկեալ է-
 րիւք դրամբք յօրինեալ՝ չորիւք սեամբք
 հաստատել՝ Էօթնեակ սեղանովք պայ-
 ծառացեալ, և հնգեակ կաթուղիկէիւք
 վայելչապէս զարդարեալ և պսակեալ :
 Հինգերդ՝ զի ունի զքսի իջման գերա-
 հրաշ լուսապայծառ տեղին ՚ի միջի իւ-
 րում, ուն արեդին ՚ի յերկինս. Ժնն. ւն. 16 :
 կամ ուն ծառն կենաց ՚ի դրախտին վափ-
 կուէ. Ժննդ. ք. 9 : կմ ուն ակն սարդիոն՝
 լն ոսկի խնժոր, և ՚ի գինտ ոսկի յեւեալ :
 ւն. 15. 11. 12 : և կամ իբրև աչք և
 սիրտ ՚ի մարմնի : Երկրորդ՝ զի է ոսկի
 սափոր՝ երկնատեղաց ամենահամ մանա-

ԳՈՒԼԵՂԻ Է ԸՄՊ ՌՈՒՆԵՂՅՈՒՆ ԷՕՒՆՈՒ ԱԷՂԱՆՈՒ :

Նոյնին . Էլից . ԺՂ . 33 : այսինքն՝ սրբալոյս
իւրոյ մեռոնին . և լին է նշխարօք ամ քբց .
և զեկեղեցեացն՝ որ լը համօրէն աշխարհ ,
ուսնի սրբու թի և զշնորհ : Վ՛յլ և՛ ուսնի
զնմանու թի հրեղէն երկնիցն , ադամայ դրախ
տին , նոյեան տապանին , աբրահամեան
վրանին , մովսիսական խորանին և սողմո
նեան տաճարին , Վ՛թնե ըրդ՝ զին է ոսկիա
պատ աննման Վ՛թու ճշմարտին սողմոնի
երկնաւոր արքային նորոյս ին լին . Բ՛մնաց .
Թ . 17 : և պատկերի նր քբցն Վ՛րի գորի
շնորհազարդ հայրնայտին , և ծայրագոյն
Վ՛ատրիարգին ամ հայոց : Վ՛թե ըրդ՝ զին է
մայր հաւատոյ՝ Թագուհի և կատարելա
գործ ամեկեղեցեաց հայաստանեայց :
Վ՛ննե ըրդ՝ զին է՛ քբ՝ որոշեալ ՚ի պղծութե
անհաւատութե և մոլորութե . ամենեին գե
ղեցիկ՝ յորում արատ ինչ կամ աղտելու թի
մեղաց ոչ գոյ ուր փեսայն իւր իսկ վկայէ .
Էրգ . Դ . 7 : Էփե . Է . 27 : Տասնե ըրդ՝ զին է
սուսքելական և ընդհանրական եկեղեցի .
վսյ՝ և ասի հախուշի հոսարան , քմ՝ ընդհան
րական մայր Վ՛թու հայաստանեայց :
Վ՛եաստանե ըրդ՝ զին է՛ արմատ ամային օ

Էօթն սեզանոց օրինակքն և Խորհուրդքն :

րինաց , և գլուխ ամ վանորէից և եկեղեցեաց , հիմն հաստատուէ և սիւն ճշմարտուէ հաւատոյս մերոյ : Արկոտասան էրդ՝ զի է՛ յո՛ւկ իմն անհամեմատ փառք և պարգև գերագոյն, ու բախուի և պսակ պարծանաց հայկազեանս ազգի : Պարձէլ՝ հրաշափառ Աթոռս մեր՝ է կոյս սբ , որ լէ կանայս ոչ խառնակեցաւ . այս է՛ լէ հեթանոսական պաշտօնս , և լէ հերետիկոսաց մոլորութիս . և զկնի երթաց գառիննս նոյ : Գաճա . ԺԴ . 4 : Ահա՛ այսն լուսապայծառ Աթոռս մեր սբ Ալմիածին՝ է կոյս սբ , և հարսն անուրատ՝ երկնաւոր փեսային : Անոյ՛ ՚ի սոյն մեծահրաշխորհուրդ՝ ունի զկոյս թուով խորան փառաց . զվեցն ՚ի միջի , և զեօթներդն ՚ի վայելչակերտ զանգակատանն : Պսոյն հայեցեալ՝ ասէ մարգարէն . Տը՛ սիրեցի զվայելչութի և այլն :

Պորդ՝ զի եօթն էին ընտիր և գեղեցիկ հասկքն՝ որք միանգամ ելանէին ՚ի մի ում փնձի , ՚ի նշանակ լինուէն եօթն ամաց . զոր փարաւօն ետես . և յովսէփ մեկնեաց :

Ծնեդ . Լս . 5 . 26 . 48 :

Գովէլի է ըստ ունեւոյն էօբնի՝ սեղանս :

և զարշակունին Տրդատ դարեւոյշտ արքայն շինել զնորս զայս եէմ զերկնանման լ'Թոուս | Վմիածին • որ փառօք լցաւ , և յոյժ մեծացաւ քան զառաջինն : | Դւր նմին իսկ արջ • զինչ ասէ բերանով սնդեայ մարգարէին • Է • 5 • 8 • 10 • Օրացիր դու զօրաբաբէլ՝ ասէ ար • և զօրացիր յեսուլ յօսեդ եկեաց քահանայ մեծ • և զօրացի ամժողովուրդ երկրիդ՝ ասէ ար • և գործեցէք , զի ես լը ձեզ եմ ասէ ար ամենակալ : | Եւ միանգամայն շարժեցից զամ աղգս • և եկեսցէ ընտիր ընտիր ընչից ամ աղգս և լցուցից զտունդ զայդ փառօք՝ ասէ ար ամենակալ : Օ ի՛ մեծ եղևիցին փառք տանդ սյդորիկ՝ վերջինն քան զառաջինն՝ ասէ ար ամենակալ • և ՚ի տեղեղդ յայդմիկ՝ տաց խաղաղուի • և խաղաղուի ոգւոյ՛ ի փրկուի ամի՛ որ գործիցէ յարուցանել զտաճարդ զայդ : | Իարձեալ՝ երկու պողալից ձիթ ենիքն ՚ի վր ոսկիաճոյլ լ'շառնակիս սբյ | Վմիածնի՛ են սոքա • այսինքն՝ սբ : } ովհաննէս մկրտիչն և կարապետն քի • և սբն Ստեփաննոս նախասարկաւագն և առաջին մարտիրոսն :

Պ

Օ ի՛

Էջին սեղանոց օրինակին և խորհուրդին :

Օ ի սց անուճամբ կառուցել սեղանքն՝ ևն
 ՚ի հիւսիսակողմն և ՚ի հըւակողմն յաջմէ և
 յահեկէ ոսկի գնախա լուցելոյ քի իջման
 գերահրաշ լուսածածանչ Տեղուցս՝ որ կայ
 ՚ի միջակէտն երկնանման տաճարիս : Եւ
 կամ որդիքն ղեբեգեայ Յակոբոս Լուս
 քեալն և Յուհաննէս Լուստարանիչն , և
 սըն Վրիգոր լուսաւորիչն : Ա ս ղե յա
 նուն սց կառուցել սեղանքն՝ կան յաջմէ
 և յահեկէ աւար խորանի ամենասուրբ
 Լ. Գաճնին : Վարձեալ՝ երկու ձիթենիքն
 ՚ի վը ոսկի գնախա լուցելոյ՝ ևն հրեշտա
 կապեալքն : Ա իբրայէլ և Վաբբիէլ պահա
 պանքն մեծի Լ. Թուոյս տանս այ : Արոց
 անուճամբ կանգնեալ սեղանն՝ է ՚ի վերնա
 տանն խորհրդոյ ՚ի հրաշակերտ ղանդա
 կատանն . որ ՚ի վերուստ հնչմամբ գոչէ ՚ի
 խորհուրդ գաբրիէլեան փողոյն : Վար
 ձեալ՝ երկու պողալից ձիթենիքն՝ մի ընդ
 աջմէ , և մի լուսահեկէ ոսկի գնախա լու
 ցելոյ լուսեղէն Լ. Թուոյս սըյ Աջմիսածնի՝
 ևն հրաշալի տաճարքն սըց հոխիսիմեանց
 և Վայիանեանց երջանիկ կուսունացն՝
 որք ևս ՚ի լուսոյ յօրինեցան . յորս կան

Գովէլի է բար ունէլոյն:

Տանդուցեալ պատուական նշխարք ու
կերաց նց: Եւ Տա այսպէս սբ Եթող
Եւ Վիսաճին՝ իբրև ոսկի աշտանակ եօթնա
Ղուհէն լուսով պայծառացեալ է՛ի հայաս
տան երկրի՛: Եւ յարարատեան ընդարձակ
դաշտի: Եւ նյ՝ ասէ մարգարէն. Տը սի
բեցի զվայելուի տան քոյ, և զտեղի յար
կի փառաց քոյ:

Եկերորդ՝ զի եօթն էին գիսակ.բ
Գլխոյ քաջն սամիսօնի՝ յորս էր զօ
րուի նր մեծ. Գառ. Ժգ. 13. 19:

Երդ՝ լուսանկար Եթող մեր սբ Եւ Վի
սաճին՝ է հայաստանեայց եկեղեցւոյ խոր
հրդաւոր մարմնոյն քի՛ երկրորդական
իմն կենսատու գլուխ. որ յաման սողէ
զհոգևորն կէնս՝ զշարժումն և զզօրութի.
և է առաջնորդ ամի և ուղղիչ. Եւ լուխ՝
որ սբ Նոգւոյն եօթնարփեան շնորհաց
իւղովն օծաւ. և ոսկի թագիւ ամ հայոց
Նայրապետութի և Սայրուէ պսակեցւ.
որոյ օրինակն յանձնադոյն՝ ի դաւիթ ցու
ցաւ. Եւ Բազ. Ժգ. 12. 23: Եւ լուխ՝
առոր ամայինն իջանէ օրհնութի և շնոր
հաց իւղն զըւարթարար. և անաթ սփռել

Էջիւնս սէշանոց օրինակին և Խորհուրդին :

Ծաւալի յիւրաքանչիւր անդամն և՛ի հա
մօրէն ժողովուրդս հայաստանեայց ՚ ստ
այնմ՝ ունի իւր զին իջանէ՝ ՚ի գլուխ և՛ի մօ
րուան ահարօնի . և՛ի մօրուճացն իջանէ՝ ՚ի
գրադանս գգեստու նր . սաղ . Ծ՛ՂԲ . 2 :
Վլուխ՝ յոսկւոյ կեփաղեայ . որոյ վարսքն
են կռածոյք՝ սեաւ իբրև զադուաւ : Էջ 4 .
Է . 11 : Ս՛ զին՝ լն նիւթական շինուճա
ծոյն արասքուստ սեագոյն երևի . և՛ի
նեքրուստ պայծառացեալ և գեղեցկա
ցեալ է իբրև զոսկի : Ս՛ ինքն իսկ տսէ .
սեաւ եմեա և գեղեցիկ , դասերք եէմի .
իբրև զվրանն կեդարու , և իբրև զխո
րանն սողմոնի : Էջ 4 . Թ . 4 : Վլուխ՝ որ է
իբրև զլեառն կարմեղոս՝ լցեալ պողօք և
ամբարուլ : ՚ ստ որուճ փեսայն իւր իսկ
տսէ . գլուխքո՛ ՚ի վրքո իբրև զկարմե
ղոս . հիւսք գլխոյքո ունի ծաղա
ւորի , թագ ՚ի գլուխ յընթացս ասպարի
ղաց : Էջ 4 . Է . 5 : Վլուխ՝ որ պսակեալ է
պանծալի թագի՛ լսաչին Վ . Է . ունի տսէ
ամ . եղի . բեղ գինդս և գորշապահանգս
(որ է Բաղրաշէն օղտալի) յինջսքո . և պսակ
պարծանաց ՚ի գլուխքո՛ էջէկ . Ժ . 12 :

ԳՊԷԼԷ Է ԸՄՔ ՌՆԷԼՈՅՆՆԷ

Վալուխ պատուական՝ որ շուրջ զիւրե
ուենի զԾիածան՝ զնշանակ յաւիտենական
ուխտին այ, ույ ետես երանելին յովհան
նէս: Եպֆ. Ժ. 1: Սորին աղագաւ՝ անծա
կերտ Վթուս մեր սբ Սլմիածին՝ ուենի
զեօթն հրաշալի սեղանս, ՚ի խորհուրդ
եօթն գիսակացն գլխոյն սամվուօնի:

Եօթներորդ՝ զի եօթն էին սիւնք կանգ
նեալք ՚ի հրաշալի տանն իմաստուէ:

Քստ այնմ, իմաստուէ շինեաց իւր տուն.
և կանգնեաց սիւնս եօթն: առաջ: Թ. 1:

Վարձէլ՝ զի եօթն են պարգևք հոգւոյն
սբ. զորս թուէ կայծակնամարտըն
եսայի. Ժ. 2. 3: Ալ հանգիցէ ՚ի վր նր

առէ, հոգի այ, հոգի իմաստուէ և հան
ճարոյ. հոգի խորհրդոյ և զօրուէ. հոգի

գիտուէ և անպաշտուէ: Ալ լցցէ զնս
հոգի երկիւղի այ: Վարձէլ՝ զի ամենամբ.

անուենս Քրիստոս ՚ի վեց գրոց բաղկոյ. որ
՚ի հրեշտակէն կոչեցաւ. կոչեցէս առէ

զանուեն նր յս. մաթ. ան. 21: զուհ. ան. 31:

Ասկ՝ հրաշալի անուենս Քրիստոս եօթն
տառիւք է յարմարագրեալ. զոր մրդրէն

վերագոչեաց. հոգի երեսաց մերոց առէ
68 ան

Էօրնն սեղանոց օրինակչին և խորհուրդչին :

Թ՛ր քս . ԽԲ . Դ . 20 : և պետրոս զՅս

քս դաւանեաց որդի յայ կենդանւոց :

Ճապ . ԺԴ . 16 :

Երդ՝ երկնամանն լ՛ծուս մեր սբ յ՛ջիւ
ածին՝ է հոյակոպ տուն իմաստուէ յայ :

Տուն՝ որոյ ճարտարագետ և արարիչ ան
է, լն առաքելոյն : Էբբ . Ժս . 10 : Տուն՝

որ շինեալ և հաստատեալ է ՚ի վ՛ր վիմին
հաւատոյ : ՚՛ վ՛ր այդր վիմի շինեցից ասէ

զեկեղեցի իմ . և դրունք դ՛ժոխոց զնա
մի յալծածարեացին : Ճապ . ԺԴ . 18 :

Տուն՝ որոյ փառքն մեծագոյն է քան զա
ռաջին տանն : մեծ եղիցին փառք տանդ

այդորիկ՝ վերջինն քան զառաջինն ասէ
Թ՛ր ամենակալ : անգ . Է . 10 :

Ս՛ յ՛ զն՝ է
այնպիսի տուն՝ որոյ հիմն է շափիղայ, և

քարինքն կարկեհան, և այլ պայծառ ա
կունք : Ս՛ յառաջագոյն խոստացաւ ան

բերանովն եսայեայ . ԺԴ . 11 : ասաւ ա
սիկ պատրաստել եմ կարկեհան զքարինս

քո և զհիմունս քո շափիղայ : ՚՛ սբ ծե
րունին տօբիթ մարդարեացաւ : ԺԴ . 21 :

՚՛ և տաճար երրորդուէ . յարկ սրբուէ
և տեղի փառաբանուէ . հրեշտակաց բը

Գովէլի է ըստ ունէլոյն :

Նստկարան, և մարդկան քաւարան, սբց
հանդիսարան, ամսցին սբց հողւոյն
եօթնարիեան շտորհացն ընդ ունարան, և
ամբարեաց շտեմարան: Ս Եւ ՚ի սոյն մե-
ծահարաշ խորհուրդ՝ ունի սբ Լթոռս
Ս ջմիածին՝ զվեց կատարեալ թոճով
ճքնաղակերտ խորանս՚ի միջի. և զմի ևս ար-
տաբոյ՚ի մեծակառոյց զանգակատանն:
Լ Թերորդ՝ զի եօթնէին աչք ՚ի վր վե-
մին՝ զոր միանգամ ետես յեսու. քահա-
նայն մեծ: զս. 7. 9:

Լ րդ՝ ամսաղարդ Լթոռս մեր՝ սբ Ս ջմի-
ածին՝ է ուր իմանալի իմն վեմ՝ զոր
մեծն յակոբ՝ կանգնեաց արձուն, և էօծ
իւղով սրբուէ. և կոչեաց զանուն տեղ-
ւոյն այնորիկ՝ տուն այ, և դուռն երկնից:
Թննդ: իր. 17. 18. 19: Ս էմ՝ զոր
նա ինքն տապալեաց ՚ի բերանոյ ջրհորոյն՝
որ էր ՚ի յարարատեան դաշտի, և արբոյց
բանաւոր խաշանց իւրոց: իր. 2. 10:
Բանզի սբ Լթոռս Ս ջմիածին՝ է աղ-
բիւր պարտիզաց ամեկեղեցեաց. ջրհոր
ջոյ կենդանւոյ սրբալոյս մեռոնին՝ հո-
սեցելոյ ՚ի լիբանանէ, ց ՚ի վերինն էէմէ.

Էօֆն սեղանոց օրինակն և խորհուրդն :

Էբֆ . 7 . 15 . || Էմ՝ զոր մեծն մովսէս՝
 էհար գաւազնէ, իմ է՝ միածին որդին իյ
 ոսկի ուռամբ . և էլին անտի երկոտասան
 վտակք ջրոյ կենդանւոյ, իմ են՝ առարկ
 լական հանգանակին երկոտսն մասո՛ւնք,
 յարբումն ժողովրդեան նորոյս իէլն :
 էլից . Ժէ . 6 : || Էր և վառքն իյ երևեցաւ
 մովսիսանման լուսաւորչին մերոյ սբչն
 Ղարիգորի : լի . 21 . 22 : || Էմ՝ օգնկնի՝
 զոր մեծն սամուէլ կանգնեաց, առ ՚ի նշա
 նակել՝ թէ մինչև ցայս վայր՝ մեզ տր օդ
 նեաց : Թ . թագ . է . 12 : || Էմ՝ զոր գեղե
 ցիկն աչօք վարդադէղն դաւիթ՝ անու՛մբն
 յի նշունակեաց . և զանմարմին գողնաթու
 հարեալ զձակտա , յերկիր կործանեաց .
 և զիէլապրեցոյց ՚ի ձեռաց այլազգեաց :
 Թ . թագ . Ժդ . 12 : Ժէ . 49 : || Էմ՝ զոր
 անարգեցին շինօղքն՝ նա եղև գլուխ ան
 կեան : սող . ճԺէ . 23 : Զորում և փեսայն
 երկնաւոր՝ զգէմն իւր եցոյց հարսին, լը
 նր վաստգանաց : Ղաւնի իմ առէք, էկ
 լհոյվանեաւ վիմին . մերձ առ նախապա
 թիսպն . ցոյց զգէմն քո և լսելի արա ինձ
 զբարբառ քո : իս զի ձայն քո քահար է, և

Պատկեր է ըստ ունեւոյն:

Դէմք քո դեղեցիկ: Երգ. Թ. 14: Ս Էմ
 անդամանդեայ՝ հաստատեալ ՚ի մէջ Ժո
 ղովդդեան նոյ նորոյս ինչի, լը տեսլեան
 Ըարգարէին: ամս. Է. 7. 8: Ս Էմ խորհր
 դակամ՝ յորոյ վր ել մարգարէն հոգւով
 սբ. և դիտէր, տեսանել զինչ խօսի լը
 իւր ամ. և ահա եկն ձայն ՚ի անի և ասէ.
 գրեա՛ զտեսիլդ զայդ յայտնայս ՚ի տախ
 տակս, զի որ ընթեռնու, համարձակ ըն
 թեռնուցու: ամս. Թ. 12: Ս Էմ ճշմար
 տուէ՛ յորոյ վր հիմնեալ հաստատեցաւ
 ուղղափառ հաւատոյ շինուած. զոր
 դրուեք դժոխոց, այն է՝ հերետիկոսք և
 աղանդապետք յաղթահարել ոչ կարնն,
 լը խոստմանն քի. մաթ. Ժգ. 18: Ս Էմ
 հոգւոր՝ յորոյ վր եթէ որ անկցի հակա
 ռակուք, փշրեսցի. և յոյր վր անկցի ա
 նիծիւք և բանադրանք, հոսեսցէ՛ զնա՚ի
 դժոխս: մաթ. իս. 44: Ս Էմ պատուհն
 որ ՚ի լէռնէ հատաւ առանց ձեռին. և հա
 րեալ զպատկերն ՚ի վր երկաթեղէն և խե
 ցեղէն ոտիցն, մանրեց զնս՝ լը գուշակու
 թէն դանիելի: Թ. 34. 45: Ս ս զի՛ հոյա
 կապ այս տաճար՝ ոչ ՚ի մարդկային ճարտա

Է: Բն սեղանոց օրինակին և Խորհուրդին:

բուժի և ՚ի ձեռաց, այլ յամենխմաստ
ճարտարապետէն Տի ՚ի հօր իմաստուէն
երկնային պայծառ լուսով նկարեալ յօ-
րինեցաւ: Իբր թէ՛ հատեալ ՚ի լեռնէ վե-
րինն եէմի՛ (որոյ դուստր է և օրինակ ՚ի
յերկրի.) և զկռոցն հարեալ ոսկեղէն և
արծաթեղէն, երկաթեղէն և խեցեղէն
պատկերս՝ որ միանգամ ՚ի ճարտարու թէ՛
և ՚ի մասց մարդկան քանդակեալ էին,
խորտակեաց զնս: Եւ ինքն եղև լեառն
մեծ. ուր քս զմծուէ իւր վառս յայտ-
նեալ՝ եցոյց. մատ. Ժէ. 1. 2: և այսօր ցըն
ծայ յանուն նր, լք բանին դաւթի: սազ.
ձք. 13: Ետն իմանալի՝ ուր երկնաւոր
վրդպան քն նստեալ՝ զերանուի ուսուցա-
նէ: մատ. Է. 1. 3: Ետն սիօն՝ որ եղև
յայտնի յաւուրս յետինս, և առն այ
հաստատել ՚ի վր դլսոց լերանց՝ առաքե-
լոց ասեմ և մարգարէից, և բարձրացել ՚ի
վր բլրոց՝ հայրապետաց և վրդպաց,
այլ և ՚ի վր վանորէից և եկեղեցեաց, առ
որ փութան և ժողովուրդ բազում, ոպ
գուշակեաց մարգարէն: Էսայ. Է. 2. 3:
Եւ եղև ի սաէ յաւուրս յետինս յայտնի

4. ԿՎԷԼԵ Է ԸՆԿՈՒՆԵԼՈՅՆ:

ԼԷՌՆ ԽՈՆ. Լ ԵՒՆ ԽՈՅ՝ Ի ՎՐ ԳՎՍՈՅ ԼԵՐԱՆՅ.
 Լ ԲԱՐՃՐԱՍՅԻՆ՝ Ի ՎՐ ԲԼՐՈՅ. Լ ԵԿԵՍՅԵՆ՝ Ի
 ՆԱ ԽՈՎՏԵԹԱՆՍԱՐ: Լ ԵՐԹԻՅԵՆ ԺՈՂՈ
 ՎՈՒՐԳՔ ԲԱՂՈՎՔ. Լ ՍԱՍԱՅԵՆ. ԵԿՎՅՐ՝
 ԵՐԹԻՅՈՒՔ՝ Ի ԼԵՒՈՆ ԽՈՆ Լ՝ Ի ԵՒՆ ԽՈՅ ԵՒՆ
 ԲԱՅ. Լ ԱԿԱՍԵՍՅԵ՝ ՄԵՂ ՂՃԱՆՆԻՂՐՏԱ ԻՒՐ.
 Լ ԳՆԱՍՅՈՒՔ Լ ՆԱ. ՂԻ՝ Ի ՍԻՈՆԷ ԵԼՅԻՆ Ե
 ՐԷՆՔ. Լ ԲԱՆ ԽՈՆ ԵԿԷՄԷ: Լ ԵՒՈՆ՝ ՈՒՐ
 ԼԻՆԻ ՎԻՐԿՈՒԼԻ ՏՈՂԼՈՅ, Լ ՍՐԲՈՒԼԻ ՄԵՂԱՅ,
 ՈՅ՝ ԱՍԷ ՄԱՐԳԱՐԷՆ: ՄԲԴԻ. Խ. 17: Լ ՐԼ
 ԲՂԽԵԱՅ ՂՔԱՂՅՐՈՒԹԻ՝: ԵՎԷՆ. Դ. 18:
 Լ ԵՒՈՆ ԲԱՐՃՐ՝ ԵՐՈՅ ՎՐ ԵԼ ԱԼԽՐԱՆԻՅՆ
 ՍԻՈՆԻ ՍԲՆ ՎՐԻԳՈՐ. Լ ԲԱՐՃՐԱՍՅՈՅՅ ՂՈ
 ՐՈՒՔ ՂՔԱՐԲԱՈ ԻՒՐ, Լ ՄԱՐԳԱՐԷՆՈՒԵՆ
 ԵՍԱՅԵՍՅ. Լ Ն. 9: Լ ԵՒՈՆ ԱՎԱՐԱՐԱ՝ Լ ՈՐ
 ԽԺ ԲՆԱԿԻԼ ՏԱԾԵՅԱԼ. ՍԱՂ. ԿԷ. 16:
 Լ ԵՒՈՆ ԿԱՐՄԵՂՈՍ՝ ԲԱՐՃՐ Լ ՄԵԺ, ՍՄԵ
 ՆԱԲԵՐ Լ ՊՊՈՂԱԼԷՍ. ՈՐ ԼԵ Է ՏՐԵՂԷՆ ԿԱ
 ՈՅՐ ԲԱՂՄՈՒՔ ՂՈՐԱՅ ԵՐԿՆԱԼՈՐԱՅ: Դ.
 ԲՍԳ. Ղ. 17: Լ ԵՒՈՆ ՆԱԲԱԼ՝ ՈՒՍԱԻՆ ՍԵ
 ՍԱՆԻ ՏԱԼԱՏՈՅ ԱՅՕՔ ԵՐԿԻՐՆ ԱԼԵՍԵԱՅ՝
 ՎԵՐԼԻՆՆ ԵԷՄ. ՂՈՐ ԼՍՈՍԱՏԱՅԱԼ ԽԺ ԱՂԳԻՍ
 ՏԱՅՈՅ՝ Լ ՏԱԼԱՏՈՅ ՈՐԳԼՈՅՍ ՍԲՐԱՏԱՄՈՒ
 ՆԱՏԱՊԵՍԻՆ. Է. 1. 2. 3. 4:

Էօթնն սեղանոց օրինակն և Խորհուրդն :

Ետևն իմանալի՝ բարձրացեալ փառօր
առաւել .քան զսինայ : Եւ զի՛նմա փայ
լատակուծն և ամպ միգախառն . և ծուխ
նր՝ էլանէր իբրև զծուխ հնոցի . և որ մի
անգամ՝ ինա մերձենայր , քարկոծ լինէր :
Էլ էց . ԺԹ . 13 . 16 . 18 : Իսկ՝ աստ՝ իլեբինս
յայտնի իջուծն միածնի որդւոյն այ , և
լոյս փառաց , և բաղմուի զօրաց երկնաւո
րաց , և բուրուծն անուշահոտուէ : () Ի
գրեթէ դաշտն արարատեան՝ նոր իմն եր
կինք եղև փառաւոր իջմամբն .քի . և որ
միանգամ առ սա մերձենայ հաւատով և
յուսով՝ սիրով և սրբուք , և կարգայ զա
նուն սորին , կեցցէ հոգւով . ԾՊԷ . 32 :
Պատարագք իւր և ուխտք՝ այ ընդ : Ընելի
լինին . զխորհրդոց իւր և զփախազանաց
առնու կատարուծն . և ուրախ լինի լս հո
գւոյ և լս մարմնոյ : Եւ ինքն իմ յառաջա
գոյն խոստացաւ բերանովն ետայեսայ . ԺԳ .
7 : Տարայց զնս առ իլեռն սրբուէ իմոյ .
և ուրախ արարից զնս ի տան աղօթից ի
մոց . ողջակէզք նց և սրտագք ընդ ունելի
լիցին ի վր սեղանոյ իմոյ . զի տուն իմ տուն
աղօթից կոչեսցի իմ հեթանոց : Ետևն

ԳՈՎԷԼԻ Է ԸՍԹ ՈՒՆԵԼՈՅԻՆ

այ քորէք՝ ուր մորենին՝ ցո՛ հացն և բա
 ժակն ՚ի խորհուրդ պատարագին վառի
 անձուէն հրով և ոչ այրի էլից Գ. 1. 20
 Այլ սոյն սյս՝ երևի հողևոր աչաց այնտ
 ցիկ՝ որք միանգամ հեղ են և խոնարհ լն
 մովսէսի, և ելել ՚ի լեառն ամ օուրքինու
 թից Գ | Եառն սրբուէ՛ յորում ճշմրիան
 իսահակ սիրելի և միածին որդին հօր այ՛
 հանապաղ պտրագի՛ լե աեսակօք հացի և
 գինւոյ, առ ՚ի բառնալ զմեզս աշխարհի
 ծննդ ԻԲ. 2. 9 | Եառն արարողոյ՝ ուր
 յետ ջրհեղեղին նստաւ տապանն նոյի
 ծննդ Ը. 4 | Այսինքն է՛ լուսապայծառ
 տեղի իջմանն քի՛ Ահա սյսնս քսահիմն
 Աթուս մեր սբ | Չմիածին՝ է վեմ խոր
 հրդական օր շնորհի՛ և զօրուք մեծա
 ցեալ՝ եղև լեառն իմանալի և ելց զամ
 երկիր ճշմրիա հաւատով և հրաշալի ան
 ուժամբ իւրով | Կորին աղագաւ՝ ունի
 դեօթնթիւ ճքնաղակերս սեղանս ՚ի խոր
 հուրդ եօթն աչացն՝ որ ՚ի վիմին ։

Մաներդ՝ զի եօթն էին զամբիւղքն՝ որք
 միանգամ եօթն նկանակացն նշխարօք
 Լցան օրը երկնաստեղծ իւր ձեռօքն քս

Էօ՛վն սէշահոց օրինակէն և խորհրտաբոյն :

օրհնեաց 'ի յանապատին . և 'ի ձեռս Մուքե-
լոցն բաշխեաց բազմամբնն ժողովրդոցն :

ճապ . ԺԷ . 34 . 37 :

Րդ՝ լուսանկա՛ր Մթուս մեր սբ Վշմիա
ծին՝ է իբրև շտեմարան իմն անձային
բազմապատիկ շնորհացն , և անձառ. պարզ
գեացն . ուստի զմեզն կերակրէ՛ լը հո-
գւոյ և լըմարմնոյ 'ի յճիս անապատի անն մեր
քս . և զհացն կենաց բաշխեալ՝ տայ անն
'ի ձեռս Մուքելոցն իւրոց թաղէոսի և
Քարթուղիմէոսի . և չորէքտասան Մուա-
քելոյն սբնն Վրիգորի , և նց փոխանորդ
դին՝ համօրէն ազգիս հայոց սրբազան
կաթուղիկոսին : Վորին աղագաւ՝ ունի
զեօթն հրաշափառ սեղանա՝ անձային օրհ-
նութիւն և երկնածիր պարզ և օք լցեալս 'ի
խորհուրդ էօթն զամբիւղոցն . որք էօթն
նկանակացն նշխարօք լցան :

Տաներդ՝ զի էօ՛վն՝ որ է բացորոշեալ և
մասնաւոր թիւ ինչ՝ ուրեք ուրեք գէթ
խելամտութիւն ձեռով՝ փոխանակ անբացորոշ
թուոյ , և զընդհանրութիւն կամ զբազմութիւն
նշանակէ : (Ճարտասանութիւն . էրէս . 275 .)

Օրօրինակ՝ յասելն քի , եթէ էօթն ան-

ԳՈՎԷԼԷԻ ԸՄՄ ՄԱՆԷԼՅԱՆ:

գամ մեղիցէ՛ քեզ եղբայր. քո և եօթն ան
գամ դարձցի՛ ՚ի քեզ և ասիցէ՛, սպառնալ
րեմ, թողցէս նմա: զո՛ւ. ԺԷ. 4: Աւր
ասա՛ բացորոշ և մասնաւոր թի՛ւդ՝ էօթն,
դնի փոխանակ անբացորոշ և ընդհանուր
թու՛ոյ: Իբր թէ՛ կամելով ասել, եթէ բա
զում անգամ մեղիցէ՛ քեզ, և բազում ան
գամ մեղայ ասացէ՛, թողցէս նմա: Վ՛մին
իրի՛ լուսապայծառ Վ՛թուս մեր սբ Վ՛ջմի
ածին՝ որ է կաթողիկէ եկեղեցի, և ընդ
հանրական մայր Վ՛թուս հայաստանեայց,
ուսի ղեօթն բաղմանշանակ թու՛ով

հրաշակերտ սեղանս:

Ս՛ետասաներդ՝ ղի միդն՝ որ է բանաւոր
և անձնաւոր տաճար այ՛, լս՛ Վ՛ռաքելոյն՝
թէ սպաքէն դուք տաճար այ՛ կենդանւոյ
էք. Բ. իրն. զ. 16: Բաղկացել է ՚ի յեօթն
մասանց. լս՛ հողւոյն ՚ի յերից, որք են բան՝
ցասումն և ցանկութի. և լս՛ մարմնոյն ՚ի
չորից տարերաց, ց՛մ են՝ հող՝ ջուր՝ օդ և
հուր:

Րդ՝ լուսեղէն Վ՛թուս մեր սբ Վ՛ջմիա
ծին՝ է հրաշալի իմն տունն, և տաճար
փառաց սրբուէ՛ այ՛: Տաճար՝ նոր իմն էր

Է՛՞նն սեղանոց օրինակն և խորհուրդն :

կինն ՚ի յերկրի երևել՝ զոր մեծին ։ Յովհանն
նու սբ Հոգին ցուցեալ : յայտ . ին . 1 :
Տաճար՝ վայելուչ պսակ ՚ի յերկոտասան
աստեղաց գերազանցուէց կազմեալ , և ՚ի
գլուխ հայոց վանորէից և եկեղեցեաց ե
դեալ : յայտ . ԺԷ . 1 : Տաճար՝ արեգակն
պայծառուէ ՚ի հայաստան ծագեալ , և
զմեղաց խաւար հալածեալ : ճաղ . ԴԲ . 2 :
Տաճար՝ գերապանծ փառօք զարդարել .
առ որ սր անձ յանկարծակի եկել , և շնոր
հիւ՛ բնակել . և ոսկիաձոյլ եօթնաջահէն
աշտանակ ՚ի վաղարշապատ քաղաքի լու
սազարդեալ . զոր մարգարէիցն յառաջա
գոյն աւետարանեալ : ճաղ . ԴԲ . 1 : զա . Բ .
10 : ԴԲ . 2 : Տաճար՝ աղբիւր ջրոյն կենդա
նւոյ՝ սրբալոյս մեռոնին ՚ի դաշտն արարա
տեան բղխեալ . և զմեր հոգիս արբուցել
զա . ԺԴ . 8 : յալ . ԴԲ . 18 : Պարարտուէ
ձիթենի ՚ի հայաստան տնկեալ , և զնման
պաղով իւր լցել : յալ . ԺԴ . 7 : Հրաշալի
կառք և անիւ՛ ՚ի յերկրի երևել , զոր մար
գարէին՝ յառաջագոյն տեսեալ : Էգե . Գ . 15 :
Տաճար՝ նոր անուամբ էջիածին կո
չեցեալ , զի միածինն ՚ի հօրէ անստ փառօք

Գովելի է ըստ ունեւոյն:

իջեալ: Էսայ. 47. 2: Նշաղկաւթիթ վար
 դենի ՚ի դնացս Տողւոյն վտակաց տնկել
 և անուշահոտութիւն զհամօրէն Սւրբ
 սիրոս. լթ. 17: Ժ. 8: Մի հօր խնամութիւն
 հրաշարի տուն շինեալ. և եօթն սեամբք
 հաստատեալ. աս. լթ. 1: Տաճար՝ որոյ
 ասելիքն են անիծելի և սիրելիքն օրհնելի
 սպասուորքն և տեօանիօղքն երանելի. զոր
 տօբիթայ ծերոյն՝ յառաջ գուշակեալ:
 Խօ. Ժ. 16. 18. 20: Սեղաց դառ
 նութի ջուրն բժշկեալ, և զերկիրս մեր՝
 հողեպս պողաբեր արարեալ: Խ. Բա. Ժ. 20. 21:
 Տաճար՝ ոսկիապատ աննման
 լ. թու. յորում ճշմարիտն սողմոն երկ
 նաւոր արքայն՝ է բազմեալ. և երկոսն
 լ. արեալքն՝ աստի և անտի կացեալ:
 Խ. Բա. Ժ. 18. 20: Տաճար՝ յորում ան
 զանուն իւր և զականջս, զաչս և զսիրտ՝
 է եղել: Խ. Բա. լթ. 3: Տաճար՝ երկնային
 փառօր լցեալ, և առաւել քան զյարկն
 սողմոնի պայծառացեալ: Խ. Բա. Ժ. 2:
 Տաճար՝ ահարօնեան ոսկի բուլբուլ՝ երկ
 նային հրով լցեալ, և զսատակման ցաւն
 բարձեալ: Բա. Ժ. 46: Տաճար՝ քառան

Էօբնն սեղանոց օրինակն և Խորհուրդն :

կիւնի տախտակ դնտանաց՝ երկոտասան
ակամբք պճնել և ՚ի լանջս ճշմարիտ քա
հանայնտին հաստատել Էւէյ. իբ. 17 : և
քան զեռամասն խորանն մովսէսի գեղեց
կացել Էւէյ. իզ. 1 : Տաճար՝ անօրին կտա
կարանաց տապանակ՝ յանիւտ փայտից
կազմեալ , և մարուք ոսկւով պատեալ :
Էւէյ. իե. 10 : Տաճար՝ ակն լուսափայլ
ոտիցն ան անգի՝ աղիւսանման երեւեալ :
Էւէյ. իդ. 10 : Եւ ոսկի սափոր՝ երկնային
ամենասամ մանանայիւ լցել Էւէյ. ժզ.
3 : Սիւն լուսոյ ՚ի յերկրի երեւել և ՚ի վե
րինն եէմ՝ մեզ առաջնորդել Էւէյ. ժդ.
21 : Տաճար՝ որթ ճշմարտուէ ՚ի հայաստան
անկեալ , և երեւք ողիւզովք խաղողոյ
հաղորդուէ՝ զազգս հայոց ՚ի մեղաց բան
տէ ազատել ծննդ. իս. 10 : Տաճար՝ լու
սեղէն սանդուխք ՚ի յերկրի հաստատել .
որով հրեշտակաց յերկիր իջեալ և մարդ
կան յերկինս ելել . առն ան և դուռն երկ
նից , և արձան իւղով օծեալ . զոր մեծին
յակոբայ յառաջագոյն տեսել և գուշա
կեալ . ծննդ. իբ. 12 . 17 . 18 : Տաճար
անօրինակ՝ քան զտաղաւարն Մբլահամու

ԳՈՎԷՆԻ Է ԸՍՏ ՈՆՆԵՆՆԵՆ

Տրաշաղարդէլ: Ճննդ. ԺԸ. 5. 8: Սմանալի
 աղելն գերափայլ՝ յամոյս լուսոյ երևէլ,
 և նոյ հաշտուեն և ուխտին լը տրամեան
 ազգիս՝ յաւխտեննն նշանակ հաստատէլ:
 Ճնն. Թ. 13. 14. 16: Տաճար՝ քան զնոյն
 տապան գերազանցեալ, ՚ի հեղեղէ մեղաց
 զհայաստանեայս փրկեալ: Ճննդ. Է. 13:
 Վերագոյն փառօք փառաւորէլ, և քան
 զդրախտն ադամայ վայելչացեալ: Ճննդ.
 Թ. 8: Տաճար՝ ՚ի քսէ հիմնարկեալ, և գե
 ղապանծ վայելչութի ՚ի լուսոյ նկարեալ:
 Լըրորդութեն բնակարան յօրինեալ՝ և
 ամսբց երկնաւորաց և երկրաւորաց ճե
 մարան կազմեալ: Լըլ զո՛ւարձալից խը
 րախճան յարդարէլ, և համօրէն ազգաց՝
 որ ՚ի վր երկրի, ցանկալի և գովելի եղէլ:
 Տաճար լուսեղէն՝ որ յամի տայ մեզ ճարօ
 Վանդի՝ ոն ՚ի յերկնից իջէլ մանանայն՝
 (զոր իբրև յատուկ պարգև ինչ ետ ամ
 ճոյն իէլի.) զամկերակրոց համն ունէր,
 և զամ ցանկութիս որդւոցն իէլի ընդր:
 Բստայնմ լը որոց զկերակուր հրեշտակաց
 ջամբեցեր Ժողովրդեան քում, և զպատ
 րաստէն հացն յերկնից ետուր նոյ առանց

Էօթն սեղանաց օրինակին և խորհո-րդին :

Հանադոյ առ ձմ ցանկուի բաւական . և
առ ձմ հանդերձնս ճաշակացն : () Ե քոյ
գոյաւորուիդ առ քո որդիս եցոյց զբաղց
րուի , լն մատուցանելոյ ցանկուին արբա
նեկել . առ որ զինչ և որ կամէր խառնէր :
Էմասս . Ժ զ . 20 . 21 : ' Եյնպէս ' և մեծա
հրաշ լուսաճաճանչ Տեղի իջմանն քի այ
որ կայ 'ի միջակէան լուսեղէն Տաճարիս
սբյ | Վմիածնի (զոր իբրև երկնային պար
գև գերագոյն , և անհամեմատ փառք ' Էտ
ձմ նորոյս իէլի արամեանս ազգի) զձմ
շնորհս և զփառս ունի ' զբաղձանս և զփա
փագ սրաից շուռ . և զձմ խնդրուածս ' զհոգևորս
և զմտրմնաւորս կտրէ : ' Երին
աղագաւ ' հոյակապ Տաճարս սբյ | Վմի
ածնի ' ունի խորհրդաբար զեօթն թուով
հրաշակերտ սեղանս . զի լն այսմ ' համա
նման և համեմատ լիցի ' բանական և հո
գև որ տաճարին այ , ց' մարդոյն , որ ունի
զեօթն մասուէնս , ըստ հոգւոյն , և ըստ
մարմնոյն :

Երկոտասաներդ զի եօթն էին աստեղք
'ի յաջ ձեռին քի , զոր Էտես Էրանելն
() Ուհաննէս հոգւով սրբով : Եայտ . ան . 160

Գովէլէ է ըստ ունէլոյն:

Լորդ՝ յուսապայծառ Մթոռս մեր նբ
 Վճմիածին՝ է իբրև սքանչելտգործ
 աջ՝ ձեռն քի նյ . ձեռն՝ որով զապաւնին
 ընկալաւ՝ զմերս հոգի ասեմ՝ ի յերկնայինն
 տապան մեծն նոյ : ծննդ . ք . 9 : Չեռն
 հրէշաակային՝ որ զմեզն՝ ի սողոմայ պղծու
 թէն է հան . և ՚ի լեառն սրբուէ հասոց :
 ԺԹ . 10 . 16 : Ար զբարեգործուէ խոր
 տիկ առել՝ տարաւ իսահակայ Հօրն երկ
 նաւորի . և ՚ի նմանէ օրհնեցաւ : Ին . 17 .
 27 : Չեռն՝ որ զերիս ողկոյզս խաղողոյ
 ճմլեաց ՚ի բաժակն ոսկի . և ետ փրւօնի :
 Խ . 11 : Մ . յսինջն՝ մայր Մթոռս մեր նբ
 Վճմիածին՝ զերիս գոյացուինն ՚ի քս ,
 զանձուինն ասեմիզհոգին և զմարմինն՝ իբր
 ճմլեաց ՚ի մարուր սկիհն՝ խորհրդով պա
 տարագին . և Հօրն երկնաւորի մատոյց ,
 որով զազգս հայոց ՚ի խաւարային բանաե
 կուղտուէ , և ՚ի կապից մեղաց փրկեաց :
 Չեռն՝ որ սա ինքն կրէ զթագաւորական
 մատանին . Խս . 42 : Կք է՝ զհայրապետական
 իշխանուէ փոխանորդին նյ , և զմայրուէ
 նմ հայոց : Չեռն աջոյ՝ որ զմեզն օրհնեաց
 հոգևոր և մարմնաւոր օրհնուէ . և ըզ

Էօթնն սեղանոց օրինակին և Խորհուրդին :

Ժնեալքս ՚իյեգիպտոս Տիս ՚ի մահ և յապականուխ արար որդիս լուսոց հօրն երկնաւորի : Խոր. 14. 15 : 'Ձեռն՝ զոր մովսէս ձգեաց . և բուռն էհար զտանէ օձին . Ելեց . Գ . 4 : 'Ս. յսինքն՝ քս և կամ սբն գրիգոր զաղգէս հայոց . որ չար գործովք եղեալ էր իբրև զօձ թիւնաւոր . որ և անդէն ՚ի ձեռին նր՝ եղև գաւազան ուղղուէ և արքայուէ . սաղմ . Խոր. 7 : 'Ձեռն՝ զոր նա ինքն ձգեաց ՚ի վր ծովուն կռայաշտուէ . և ցամայեցոց . և զնորս իէլլէ աղաշխարուէ անապատ անցոց : Ելեց . ԺԳ . 21 : 'Որ և զմեղ ՚ի մարտս պատէրսղի Էդէմբելիարայ զօրացուցանէ : ԺԷ . 11 : 'Ձեռն՝ որ ունի զերկու տակտակսն վիսյուէ . քս՝ զհին և զնոր օրէնս : Ելեց . ԼԷ . 15 : 'Սակ զլցեալն երկնային հրով զբուրվառն ոսկի : Բո՛ւ . ԺԴ . 46 . Գլէրջն : զծայրագոցնն ասեմ քահանայապետուի և զհայրապետուի ամ հայոց : 'Ձեռն՝ որ էհար զայրն պղծագործ . քս՝ զպատկերն ամիրոգիտեայ (որ էր շածուհի վալաշտուէ .) և դադարէց հարուճածն յօրդուոցս իէլլէ : Բո՛ւ . Իե . 7 . 8 : 'Ձեռն

ԳՊՎԷԼԵ Է ԸՄՄ ՌՈՒՆԵԼՆԻՆԷ

ՏՂՈՐ և բազում կ'բարձր որով զնորս ինչ
 զարամեանս ազգ՝ յանմարտին փարաւոնէ
 քս փրկեաց . ՚ի տանէ ծառայուէ՝ յե
 գիպտոսէ՝ գժսխոց էհան . և ՚ի վերինն
 եէմ տարաւ Ե . 15 : Չեռն՝ զոր քաջն
 յեսու ձգեաց գայխանաւն ՚ի վր գայեաց
 քաղաքին, և էսու զնա յեաս . Ը . 18 . 19 :
 Լ՝ յսինքն՝ փրկիչն յս, կամ սբն գրիգոր
 ձգեաց տմենայաղթ նշանաւ խաչին՝ ՚ի վր
 կուոցն մեհնեաց՝ որ ՚ի հայաստան Տիս .
 կործանեաց զնս և հրով այրեաց : Չեռն՝
 որ զփող և զջահ կրելով, մադիամու բա
 նակին յաղթեաց : ԳՄՄ . Է . 16 . ԿՎԵՐԸՆ :
 Լ՝ յսինքն՝ մայր Լ՝ թուս մեր սբ Լ՝ Չմիա
 ծին՝ ընկալաւ զբարոզուի և զլոյս Լ՝ Է
 տարանին, և զբաւանուի նիկիական . և
 յաղթեաց արիանոսաց : Չեռն՝ որ զա
 ուիւծուն ճեղքեաց բերան . և էհան ան
 տի մեղք քաղցրուէ : ԺԴ . 5 . 6 . 8 . 9 :
 Լ՝ յսինքն՝ խորտակեց քս զբռնուին սանյի,
 որ իբրև զաուիւծ գոչէ շրջե . և խնդրե
 թէ զո կլանիցէ . Թ . ԿԵՄ . Է . 8 : զբժոխս
 աւերեաց, և զհոգիս հայաստանեայց ան
 տի էհան՝ միջնորդուէ սբ Լ՝ թուոյս և ՚ի

Էօբնն սէզանոց օրինակսն և խորհուրդսն :

ձեռնն սքնն գրիգորի : Չեռն՝ զոր դաւիթ
ի մատիսաղն ձգեաց, և էհանն անտիքար մի.
Կամ՝ ի յերկնից երկինս, և առեալ անտի
դքաղցր և զնոր անուշդ. | Վիտծին,
պարսաքարեաց քարոզուէ՛ և սքանչելա
գործուծէ՛. և զանմարմին գողիաթու
հարեալ զճակատ՝ յերկիր տապալէց զնա:
Թափ. ԺԷ. 49 : Չեռն՝ որ զձուկն
կալաւ. և ի գետոյն ի ցամաք էհանն. Կ
մայր | Թուս հայաստանեայց սք | Վի
տծին՝ ըմբռնէ հաւատով. և հանէ ի յիծա
ղունչ գրոց զտնօրէնուէն. քի խորհուրդ :
|| Ըրոյ դառնակակիծ չարչարանաց և ի ա
չելուէ լեղեաւն՝ մերս հոգւոց կուրացել
աչք լուսաւորին. և սք մարմնոյ և արեան
հաղորդուէն՝ աղմոգեոս չար դւն (որ
պղծուէ իշխէ,) վախուցեալ հալածի :
Գօբն. Դ. 4 : Գլխիւն : Ը. 2 : Ժա. 13. 14. 15 :
Չեռն արքայական՝ որ ունի զդաւաղան
ոսկի, զհոգւորն ասեմ տէրուի, զծայրա
գոյն Պատրիարքուի, և զհայրապետա
կան իշխանուի մմ հայոց : | Չւ զսոյն զայս
դաւաղան՝ որում և կամիցի տալ ի ձեռս,

Գովէլէի Է ըստ սահեւոյն:

կամ գնել ՚ի վր ստորանոցի, նա ինքն մտա
նէ հանդերձ իւրայնովքն ՚ի ներքին սե
նեակն յարքայութիւն երկնից: Էսթեբ. Է. 13:
ԺԵ. 14: Ը. 4: Չեռն՝ որ զհեթանոսութի
նի հայաստան Տէ խլեաց. և զքրիստո
նէութի տնկեաց: սաղմ. խմբ. 3: Որ զմեզն
ընկալաւ ՚ի հաւատս. և հոգւով զօրացոյց:
ձք. 22: Չեռն բարեւից՝ զոր բանայքն, և
լցուցանէ զամեն քաղցրութիւն կամօք իւ
րովք: ձք. 28: Որ կաթեցուցնէ զմուռս.
յմ՝ զշնորհս հոգւոյն, և զիւզն օծուէ:
Էրգ. Է. 5: Չեռն սրօքեական՝ որ ունի
զկայծակն ամսային. և զմեզ ՚ի մեղաց սրբէ:
Էսայ. զ. 6: Չեռն այ՝ ուր նկարեցաւ
պատկեր և պարխապ վերինն եւ մի խթ. 16:
Չեռն՝ որ ունի զհեթանոց, յմ՝ վնշան ա
մենայաղթ խաչին քիչ կամ զիւզն օծուէ.
որով զուսածնունդ որդիս իւր ՚ի շտե
մտորանս արքայուէ ժողովէ: մատ. Գ. 12:
Չեռն յի՛ որ զմեզն սրբէ ՚ի հոգևոր բո
րոտուէ: մատ. Ը. 3: Ղբաղմասպատիկ ցաւս
մեր վարատէ. և զամ հիւանդութիս ըզ
հոգևորս և զմտորմաստորս բժշկէ. Ը.
15. 16: և զմեզօք մեռեալ հոգիս մեր

Էջնն սեղանոց օրհնակին և խորհուրդին:

կենդանացանէ. [Թ. 25: Ալ զմեզ ՚ի Նիս
անաստաթի՝ հոգևոր և մարմնաւոր հացիւ
կերակրէ: ԺԴ. 19: զմիտս մեր ըմբռնէ.
և ՚ի ծով մուրրուէ և երկմտուէ յընկրմէ
լոյն փրկէ: ԺԴ. 31: Չեռն՝ որ զարբայուէ
երկնից ընկալաւ զփականս. ԺԶ. 19: զհո
գևոր և զմարմնաւոր լսելիս բանայ. և
զկասպանս լեզուի լուծանէ. ճարկ. է 33.
35: և զբիւճահարս բժշկէ: [Թ. 26: Ար
տունէ սղորմուի սնկելոյն ՚ի ձեռս աւա
ղակաց դիւցի ճանաստարհի Նիս. և մու
տուցել զթուք՝ զվերս նր պատէ. արկել
՚ի վր զձէթ պարարտուէ և զգինի ու
րախուէ: Պս. Ժ. 34: Չեռն՝ որ զանիրաւ
գնօղս և զվաճառօղս՝ եթէ զմարմնաւորս
և եթէ զհոգևորս, խարաղանսւ յանդի
մանուէ հանէ արտաքս՝ յաստի կեանս ՚ի
տաճարէ շնորհաց և օրհնուէց. և ՚ի հան
դերձելու մն ՚ի տաճարէն երկնից արքայ
ուէ: Ես. Բ. 15: Ար զջուր մարմնական
արոց և ընծայից ՚ի մէնջ խնդրէ. և ինքն
զջուր յաւիտենական կենաց մեզ փոխա
րինէ: Դ. 7. 10. 14: Չեռն՝ որ զտաս մեր
՚ի ջուր աւաղանին լուծանայ. և ՚ի մեղաց

Գովէլէ է ըստ ունէլոյն :

նախահօրն՝ շնորհիւ սրբէ . Ժ Գ . 5 : Չեռն
 առաքելական՝ որ ՚ի կողն յի մխեցաւ . ՚ի
 յարուի նր հաւատաց . և մեզն եբեր է
 բանուիւ ի . 27 . 28 . 29 : Ար յարուցանէ
 ՚ի մեռելոց զտաքիթայն , յի՛ զայն՝ որ լի է
 բարի գործովք և ողորմութիւնք . Գործ . Թ . 41 :
 Չեռն հրեշտակային՝ որ զկողս մեր խը
 թեաց . ՚ի քնոյ թմրուէց զարթոյց . ՚ի
 բանատ մեղաց է հան . և ՚ի ձեռաց սատա
 նայի փրկեաց : Ժ Բ . 7 . 11 : Չեռն ան
 ային՝ որ ունի զմատեան՝ դրեալ ներքոյ և
 արտաքոյ . և կնքեալ եօթն կնքով . զոր ոչ
 որ գաւաւ արժանի , բռնալ և ընթեռնուլ .
 բայց միայն առիւծն հզօր յաղգէն յու
 դայ որդին դաւթի , և գառն այ նորն
 մեր յս . քս . 3 . 3 . 5 . 6 . 7 : Ար էջն ՚ի
 յերկնից ՚ի դաշտս արարատեան . և յօրի
 նեաց ՚ի պսցծաւ լուսոյ գեղապանծ վայ
 ելչութիւն զմայր Աթուս հայաստանեայց
 զսբ Ա Ղմիածին . իբր բանալով զեօթն
 կնիքս՝ բազմախորհուրդ մատենին , և
 յայտնելով ՚ի՛ եթէ նոր իմն եօթնաս
 տեղեան լուսեղէն խորան է՝ աստ՚ի յերկ
 ցին՝ հոյակապ Տաճարս սբ Ղմիածին .

Էօթն սեղանաց օրինակին և խորհուրդին :

Էօթնարփեան շնորհաց շտեմարան եղեալ .

Էօթն խորհրդովք զարդարեալ , և Էօթն

կարգօք հրաշացեալ : Ար և՛ի մեծահրաշ

յայս խորհուրդ՝ ունի զԷօթն թուով

չքնաղակերտ սեղանս , իբրև ամենակալ

և ամենաբաշխ աջ Չեռն քի այ՝ զԷօթն

պայծառ սատեղս . և կամ ուր իմաստալից

մատեան՝ զԷօթն կնիքս , զորս եբաց քն :

() այս ամ մըրէրէին յսուաջադոյն տեսել

և սբ հոգևով իմացել , սսէ . Տը սիրեցի

զվայելչութի տան քոյ . և զտեղի յարկի

փառիոց քոց :

Երեքտասաներորդ՝ զի՛ մեծն բաբելոն ,

(յի է՝ հում , կամ կուստանդնուպօլիս)

ունի լերինս Էօթն . յորոց վը՛ր նստեալ է

քաղաքն : Եայտ . Ժէ . 5 . 9 :

Երդ՝ երկնանման Վթուս մեր սբ | ջմի

ածին՝ է իբրև հոյակապ և բարելից

քաղաք իմն այ՝ կենդանւոյ . քաղաք՝ յան

ցուորաց տեղի ապաւինի : Թո՛ւ . լէ . 12 :

Վաղաք այ՝ զոր գնացք եդեմական գե

տոց ուրախ սուննն : սողմ . խէ . 5 : Վա

ղաք՝ որ երկնային լուսոյն լուսաւորեցաւ .

և փառք ան՛ի վը՛ր իւր ծագեցան . յորում

ԳՊՎԷԼԻ Է ԸՄՊ ՊԵՆԵԼՅԱՆ ։

և ինքն իսկ արն յայտնեցաւ . որոյ դրունք
 բաց են հանապազ ՚ի տունէ և ՚ի գիշերի .
 և առ ինքն կրէ զզօրութի ազգաց ։ Վ՛ա
 զաք՝ որում որք ոչն ծառայեն , կորիցեն .
 և ազգքն աւերելով աւերեսցին ։ Վ՛ազաք՝
 տեղի սրբուէ , և տեղի ոտիցն ան . զոր ար
 փառաւորեաց . և արար յուրախութի յա
 լիանանական և ցնծութի յազգաց յազգս ։
 Վ՛ազաք՝ որդիէ՛ զկաթն հեթանոսաց . և
 ուտէ զմեծութի թագաւորաց ։ Վ՛ազաք՝
 որոյ պարիսպքն՝ կոչեն վրկութի , և դրունքն
 ցնծութի ։ որում եղև ար անձ լոյս յուր
 տանական , և տնհամեմատ փառք . զոր թա
 գաւորք իսկ տեսանեն ։ Վ՛ազաք՝ որում
 նոր անուն ըջիածին կոչեցաւ . զոր յի
 ջանելն իւր անսա՛քս անունեաց ։ Վ՛ա
 զաք՝ որ եղև պսակ վայելուէ ՚ի ձեռին
 ան , և թագ արքայուէ ՚ի ձեռին ան . զոր
 պահպանեն զօրք հրեշտակաց յամժամ ։
 Վ՛ազաք՝ որ է դուստր վերնոյն սիօնի , և
 կոչեցաւ խնդրեալ , և ոչ լքեալ , ոնյ յա
 ռաջագոյն աւետարանեաց կոյծակնա
 մարութն եսայի . Ի . 1 . ցվէջըն . կլբ . 2 .
 ցվէջըն ։ Վ՛ազաք ճշմարիտ . և լեառն ան

Էօբնն սեղանոց օրինակին և խորհուրդին :

ամենակալի՝ լեառն սբ. զա. ք. 3 : Քաղաք սբ. յոր մտին նախապետք և մարգարէք և ամ սբք՝ յետ յարուեն քի օ մար. իէ. 52. 53 : Վաւ մեք իակ՝ որք միանգամ հոգւով մեռել էսք և թաղեալ ՚ի մեղս յարեսք ՚ի մեռելոց, և ելաք ՚ի գերեզմանաց, ցր՝ ՚ի հեթանոսական մոլորուէց, և մտաք յայս քաղաք՝ շնորհօք ան մերցյ յի քի՝ որ յարեաւն ՚ի մեռելոց. և աստ էջ ՚ի քաղաքս վաղարշաստա՝ միջնորդութիւն սբ. յի Վրիգորի ՚ի նշան յատուկ սիրոյն առ ազգս հայոց : Քաղաք՝ որոյ ճարտարապետ և արարիչ ամ է : Էբրայ. Ժա. 10 : Քաղաք մեծ և սբ. նոր եէմ ՚ի յերկնից իջեալ առ յոյ. որ ունի երկոտասան հեմունս ՚ի յերկոտան ականց պատուէկնց. և երկոտասան դրունս ՚ի յերկոտասան մարգարտաց, որոյ լարձակուին է ոսկի մարութր՝ ոն զասրակի պայծառ. որում ոչ են պետք լոյսք արեգական և լուսնի, զի լուսաւորեսցեն զնա. քանզի՝ փառքն այ լուսաւորին զսա յամ Ժամ. և ճրագ ՚ի ամս գառն այ, և գան հեթանոսք ՚ի լոյս սորա և թագաւորք երկրի լուսազգետոց

ԳՊԷԼԻ Է ԸՄՔ ՈՒՆԵԼՅՈՒՆ :

լինին ՚ի փառաց սորա . յորում է փառք և
 պատիւ՝ ազգաց : Վաստայք՝ ուստի ելանէ
 մարուք գետ ջրոյն կենդանւոյ , այն է՝
 եօթնարիեան շնորհաց հոգւոյն սբյ , և
 անձազործ մեռնին իւղոյ : Եւ ունի զէ-
 ղերբ գետոյն երկոտան ծառս կենաց . որք
 բերեն պտուղս երկոտասան . յի են՝ երկո-
 տասան առարեայքն . և երկոտասան ա-
 տիճանքն հանդանակի նոցին . և երկոտա-
 սան մասուէքն իմաստուէ . յորում քա-
 ղարի է և պայծառ ակթուն այ և գառին
 նր . յի՝ փոխանորդին այ և լուսաւորչին հո-
 գւոց մերոց սբյն Վրիգորի շնրհազարդ-
 հայրնդտին , ոպ ետես երանելին Յովհան-
 նէս : յայտ . ին . 10 . ԳՊԷԼՆ : և իբ . 1 . 2 .
 3 : Եւ մին իրի՝ Վաստայքն Վթռս մեր սբ
 Եւջիածին՝ մեծաւ խորհրդով ունի
 զեօթնաթիւ չքնաղաշէն խորանս , իբրև
 քաղաք այ կենդանւոյ՝ զեօթն մեծամեծ-
 լերինս : Յորս ելանել և կալ ՚ի տեղւոջն
 սրբուէ՝ նա է արժանի , որ միանգամ
 զարդարեալ է առարինութէք . պահէ
 զտասնաբանեայ օրէնս՝ և գործէ զտասն
 առարինուէն , զորս թուէ մարգարէն . յի
 են՝

Էօթն սեղանաց օրինակն և խարհարդն :

Լն՝ որ սբ է ձեռօք, և ամբիծ սրտիւ . որ ոչ նենդաւորեաց լեզուաւ իւրով . և չար ընկերի իւրում ոչ արար : Սախատինս ՚ի մեծաւորաց ոչ առնու . արհամարհել է առաջի նր չարագործն, և այլն որ զկնի :
սաղմ . ԺԴ . 1 . Կվէրջն : իԴ . 3 . 4 :

Սորեքատասաներդ՝ զի Էօթն Լն գլխաւոր օրինակք մարդեղուէն քի՛ որք միտնդամ ՚ի մրդրէս գուշակեցան հոգւով սբ վ : Սախ՝ մորենին վառել և անկէղ մնացել . զոր ետես մովսէս ՚ի նմանուի կուսական ծննդեանն : Էլից . Դ . 2 : Սրկրորգ՝ գաւազանն ահարօնի . որ ՚ի միում գիշերի կանաչադաւ, և ծաղկեալ պաղաբերեաց : Բռւ . ԺԷ . 8 : Սաւազանն՝ նշանակէր զսբ կոյսն մարիամ . և ծաղիկն՝ զյս քսիւտաց . Ժս . 1 : Սրդ՝ գեղմն գեղեօնի լցեալ ցօղով, ՚ի նշանակ մարուր արգանտի սբյ կուսինն՝ յոր էջն յերկնից բանն ամ . Գա . Գ . 37 : Ստայնմ, իջցէ ուր անձրև ՚ի վր գեղմնն, ուր ցօղ զի ցօղէ յերկիր : սաղմ . հս . 6 : Սանդի ցօղովն որ ՚ի գեման, զքս ՚ի կոյսն խորհրդած Լն վարդապետք եկեղեցւոյ : Սորդ՝ յեսս դառնալն արե

ԳՈՒԼԵԼԻ Է ԸՍԹ ՈՒՆԷՆՅՆՆԷ

գական սու եղեկիացիւ . որ նշանակէր ըզ
մեղօք հիւանդացել բնուիս մարդկան .
յեսոս դառնալն արեգիկն՝ զմարմնանալ
որդւոյն այ արեգիկնն արդարուէ . ինն
աստիճանքն՝ զիննեակ դասս հըշտկաց . և
մին՝ զազգս մարդկանս . Քանզև՝ ոչ երբէք
զհրեշտակաց բուռն հարկանէ , այլ զզա
ւակէն արբահամու , լի բարբառոց տար
սոնեան փողոյն : Էբք . Բ . 16 : 11 ս զև ՚ի
տասնէրդ աստիճանն էջ բանն անժ , իբրև
մարմնացաւ . և տասն աստիճանօք յեսոս
դարձաւ . յորժամ համբարձաւ , զ Բազ .
Ի . 10 : Հինգերդ՝ արևելեան փակեալ
դուռն առձարին՝ զոր ծանոց եղեկիէլ :
Խոք . 2 : Ըյդ դուռն սակ , փակել կաց
ցէ . և մի բացցի . և մի ոք անցցէ լի դա . զև
ան ան ինչի մտցէ լի դա . և եղևցի փա
կեալ : Դուռն նշանակէր զսբ կոյսն մա
րիամ փակեալ կուսութիւ . լի որ եմուտ
յորուք բանն անժ , և ել ծննդեամբ . և
զկուսութի մօրն անխախտելի պահեաց
զկնք : 11 Էցերդ՝ վէմն առանց ձեռ ին հա
տեալ ՚ի լեռնէն , մանրեաց զպատկերն .
զոր էտես նաբուդոդոնոսոր , և մեկնեաց

Էօթն սեզանոց Երինաչն և Խորհուրդն :

Դանիէլ : Բ . 44 : || Էմն՝ էր բանն ամ, որ
հատէլ ՚ի Լեռնէ առանց ձեռին, ցի՛ ՚ի հօրէ
Ծնէլ առանց մօր, և ՚ի մօրէ առնց հօր,
զկռնչտուին Խորտակեց և Էբարձ յճէ :
Եօթներդ՝ Դանիէլի արկանին ՚ի գուբն
առիւծուց . զ . 16 : Ծի . 30 . Կվէրջն :
Պանիէլ նշանակէր զմարդկայինս բնուի .
գուբն՝ զճս, վեց օրն՝ զվեց դարս . Էօթն
առիւծքն՝ զԷօթն մահուչափ մեղսն .
բանտն կնքեալ՝ զսբ ամածինն . ամբա
կում՝ զքս . պատրաստէլ ձաշն՝ զփրկա
կան մարմինն և արիւնն քի : || Կյ՝ սովին
մեծահրաշ Խորհրդով՝ և մայր՝ Եթոռս
մեր սբ Եջմիածին՝ որ զմարդեղուէն քի
անբարբառ իմն քարոզէ Խորհուրդ, ու
նի զԷօթնէկ Թուով հրաշակեթտ սեղանս .
Պսոյն հայեցլ՝ ասէ մրդբէն . Խոր սիրեցի
զվայելչուի տան քոյ, և զտեղի յարկի վաս
ուաց քոյ :

Նդետասաներդ՝ զի Էօթն են յատկու
Թիք աղաւնոյն, որք համեմտին Էօթն
արիեան պարգևաց հոգւոյն սբ : Էսայ .
Ժ . 2 : Ետն՝ աղաւնին բնակի և նստի
մերձ գնացուն ջրոյ, զի զբաղէին ստուէր

Ղապէտի է ըստ սահեւոյն:

'ի ջուրն տեսել՝ փախչիցի • և սովաւ նշա
 նակի պարգևն իմաստուէ: Արկրդ՝ ա
 զաւնին է՝ գեղեցիկ աչօք և հեղ թռչուն •
 որ զձագս իւր՝ ի սնուցանելնս ոչ վշտացու
 ցանէ • և այս ցուցանէ զպարգևն հան
 ձարոյ: Արդ՝ ազաւնին զայլոց ձագս սնու
 ցանէ • որով ցուցանի պարգևն խորհր
 դոյ: Արդ՝ աղաւնին զբոյն իւր դնէ 'ի
 ծերպս վիմաց • որ նշանակէ զպարգևն
 զօրուէ: Հինգերդ՝ աղաւնին 'ի միջոց կէ
 ղեոյն զընտիր ունգս ուտէ • և զկեղևն 'ի
 բաց ձգէ • որ ցուցանէ զպարգևն գիտու
 թէ: Արդ՝ աղաւնին ոչ ունի լեղև և
 ոչ մաղձ, ըստ ստեղծմանս • որ նշանակէ
 զպարգևն անպաշտուէ: Աթոներդ՝ ա
 զաւնին է որբական թռչուն • զի միշտ հե
 ծէ և մնչէ 'ի բոյնն իւր • որ նշանակէ
 զպարգևն երկիրդ: Արդ՝ քսահիւն և
 Վճակերտ մայր Աթոռս մեր սբ Ամրա
 ծին՝ է՝ իբրև զաղաւնի գեղեցիկ աչօք •
 երգի • Դ • Ի • Կ • հաւատով և դաւանու
 թք: Աղաւնի քաղցրաբարբառ • որ մեծին
 նոյի եբեր աւետիս ուրախուէ՝ էթէ ցա
 ծուցեալ է ջուրն կռապաշտուէ յերկրէ

ԱՅՈՒՆ ԱԷԶԱՆՈՅ ՕՐԻՆԱՀԻՆ Լ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ :

Հայոց . և փոխանակ ձիթենի տերևոյն՝ Է
բեր զազատուի հոգւոց մերոց , և զոր
դէզրուի առ ՚ի հօրէ օծմամբ Ա՛ծագործ
իւղոյն սրբուէ : Ծննդ . Ը . 11 : Ա՛ղաւնի
լուսամբետուր և բազմամօին . զի՛ զհամօ
րէն ազգս Հայոց ծնաւ մկրտութիւն յորդիս
լուսոյ և յորդիս առննջեան , ը գուշա
կուէ մարգարէին : Էսայ . ԿԳ . 8 : Ա՛լուսա
ստէ , որ ետես այսպիսի ինչ , եթէ երկնեաց
երկիր ՚ի միում աւուր , և ծնաւ ազգ մի
ողջոյն . զի երկնեաց սիօն և ծնաւ զման
կունս իւր : Ա՛ղաւնի միամիտ՝ որ նստի ՚ի
մի լիուէ ջուրց եօթնրօպեան սարգեաց
հոգւոյն սբջ : և զլեղի դառնուէ , յի՛ զհե
րեաիկոսուի , կի՛ զհերձուածողական մո
լորուի ոչ ունի . այլ է՛ կատարել հաւա
տով , և լցեալ սիրով , և սուսեւել լանձա
հաճոյ բարեկարգութիւն : Ա՛ ստորում փե
սայն իւր իսկ գովէ , յասենն . մի է աղաւնի
իմ . կատարել իմ . մի է մօր իւրոյ ընտրել
ծնողին իւրոյ . տեսին զնա դասերք և երա
նեցին նմա . թագուհիք և հարձք գովեցին
զնա : Էրգ . Գ՛ . 8 : Ա՛յորին աղադաւ՝ ունի
զեօթն պայծառակերտ սեղանս ՚ի խոր

ԳՊԷԼԷ Է ԸՄՊ ՈՒՆԷԼՈՅՆ:

ՏՈՒՐԴ ԵՕԹԻՆԳ յատկուէց աղաւնւոյն,
Էշտասանե՞րդ՝ զի լը իմաստնոցն բնի,
ԵՕԹՆ ԷՆ զարմացմանն արժանաւոր՝
ԳԵՐԱՏՈՂԱԿ մեծագործու[թ]իքն , կամ
սքանչելի իրքն 'ի մէջ Տի: (Ե) որոց տէս
'ի գիրս ԹԵՍԱԼՐՈՍԻ . յԵՐԷՄ . 139 :

ՐԴ՝ ԼՃՊԲՆԱԿ մայր ԼՃՌՈՒՍ մեր սք
ԼՂՄԻԾԻՆ՝ Է՛ իբրև նոր իմն սքանչելի
մեծագործու[թ]ի 'ի մէջ ամերկրի , մանա
ւանդ 'ի հայաստանն աշխարհի , երկնային
պայծառ լուսով և վայելուչ ձևով՝ գե
ղեցկայրմանը շինուածով և շքնաղկերա
ուածով՝ ամենասքինչ արուեստիւն և շքեղ
հաստուածով՝ խաչանմանն հիմնարկուէ ,
և անհամեմատ յօրինուածով 'ի գերա
գոյն ճարտարպետէն , 'ի հօր Իմաստուէն
սքանչելագործեալ , 'ի մխիթարու[թ]ի և 'ի
ցնծու[թ]ի արամեանս ազգի : Ա՛ սկ՝ ունի
խորհրդաբար՝ զԵՕԹՆ հրշակերտ խորանս՝
հիացմանն արժանաւորս , լը ԹՈՒՆԳ ԵՕԹ
նեակ սքանչելեացն՝ որ 'ի մէջ Տի :

ԵՕԹՆԼՄԱՍՆԷՐԴ՝ զի զԵՕԹՆ ԹԻՒՆ՝ յոր
ժամ հանդերձ նախագուենիւքն իւրովք
բաղմապատկեմք , բացակարէ՛ իլը . ԹԻՒՆ :

ՎՊԱՆ

Էօթն օեղանոց օրինակն և խորհուրդն :

Վսնզի՛ առնլովն զվեց՛ բացակտրէ՛ ժի՛ .
և առնլովն հինգ՛ բացակատարէ՛ ժը՛ . և
առնլովն չորս՛ բացակտրէ՛ իբ՛ . և առնլովն
երիս՛ բացակտրէ՛ իե՛ . և առնլովն երկուս՛
բացակտրէ՛ իէ՛ . և առնլովն զմի՛ բացակա
տարէ՛ իը՛, թիւ՛ . որ է եօթնիցս չորք, և
յատուկ շրջան արեգական : ॥ ս զն՛ լը
տօմարագիտաց, արեգկն և լուսնի հսրկ
մեծ շրջանն՛ է շլբ՛ . ամ, որ կոչի հինգհա
րի-բեակ՛ . իսկ՛ արեգական յտուկ շրջանն՛
է իը՛ . ամ, որ ասի Կասնեո-թեակ՛ . և լուս
նին՛ է ժթ՛ . ամ, որ ասի Իննեփասնեթեակ՛ :
Վրեգակն՛ ՚ի շլբ՛ . ամն՛ զյտուկ շրջանն իւր
կատարէ ժթ՛ . անգամ . իսկ՛ լուսինն իը՛ .
անգամ . քանզի եթէ ժթ՛ . անգամ իը՛ .
և եթէ իը՛ . անգամ ժթ՛, է շլբ՛ . ամ :

Եւ քանզի երկնաման Վթուս մեր սբ
Վջմիածին՛ է իբրև յտուկ շրջան իմն՛
ճեմարան, և օթարան արեգականն ար
դարուէ . յորում արանի լոյսն ճեմարիտ
Վսն ՚ի կենցաղոյս գիշերի, մինչև ՚ի ծա
գել առաւօտու աւուրն աներեկի . 90բ .
լը . 19 . ॥ Եւ ին խորհրդով՛ ունի զեօթ
նաթիւ՛ հրաշափառ սեղանս :

Պատկեր է ըստ ունեւոյն :

Թուտասնէրդ՝ զի եօթն են դարք Տի
 ՚ի սկզբանէ՛ մինչև ՚ի կտրած : Օ ի զորօ
 բինակ՝ շքթն եօթն աւուրբք չափի՛նոյնս՝
 ամբ կենցաղոյս և ժամանակ՝ եօթն դարուք
 աւարաի : Արոց Առաջինն՝ է յՂամայ
 մինչև ցնոյ : Արկրդն՝ ՚ինոյէ՛ մինչև ցաբրա
 համ : Արդն՝ յաբրահամէ՛ մինչև ցմովսէս :
 Չորդն՝ ՚ի մովսիսէ՛ մինչև ՚ի սողմոն :
 Հինգերդն՝ ՚ի սողմոնէ՛ մինչև յազատու
 թին իէլի՛ ՚ի բաբելական գերուէն : Ա եց
 երկրդն՝ յազատուէն իէլի մինչև ՚ի ծնուն
 դըն քի և ՚ի համբարձումս Աթոթնէրդն՝
 ՚ի հոգեգալստենէն մինչև ՚ի կտրած Տի :
 Իարձէլ՝ զի եօթն են հրահալելք ՚ի յերկ
 ըի : Առաջինն՝ է կապարն , յի՛ արձիճն .
 երկրդն՝ անագն , յի՛ կլայեկն . երրդն՝
 երկաթն . չորդն՝ ոսկին . հինգերորդն՝
 պղինձն . վեցերդն՝ սնդիկն , որ է ժիվայ .
 եօթնէրդն՝ է արծաթն : Ա յի՛ սովին
 խորհրդուլ և լուստկերտ Աթուս մեր սբ
 Աջմիածին՝ որ է նոր իմն երկիր կենդա
 նեացիւ հոգևոր աշխարհ՝ համանման և
 տիպ իմանալեաց վերնոյ Տին՝ ունի զեօթ
 նեակ թուուլ չքնաղաչէն խորանս :

ԼճՈՒՆ ԱԷՂԱՆՈՅ ՕՐԻՆԱՅԻՆ Ե ԽՈՐՀՈՒՐԴԻՆ

Ննեւտամներդ՝ զի ԷՈՒՆ ԹԻՐՆ՝ Ժամանակ
կոչի . (տես՝ ՚ի սահմանաց ԺԴ . պրակինս)

Ս ի զի գորով գլխաւոր մասն Ժամանա
կին , և իբր հիմն և արմատ նորին , առել
լինի՝ փոխնէ բողորին խելամտուէ ձեով
(Ճարտասանութի . էրէս . 274 : Վանդի՝ զոր
օրինակ՝ անիւն սոյլի՝ ի վր լիսուան Թաւա
լի . նոյնպէս կենցաղոյս բողոր Ժամանակ՝
որ է չափ շրջագայուէ առաջնոյ շարժու
նին՝ որ ՚ի մեջոցս քսաննչորից Ժամու կա
տարի , ՚ի վր Էօթնեակ աւուրց շքթուն
հոլովի : Ս ի զի՝ շքթն չորէքոգատկեալ՝
ամիս լինի՝ ամիսն երկոտասանսպատկեալ՝
տարին կատարի . ամն բազմապատկեալ՝
դար լինի . և դարն Էօթնապատկեալ ըն
թացք Տիս և Ժամանակ վճարի : (Վանդի
ոպ՝ ի վեր անդր անցաք , Էօթն են դարք Տի
՚ի սկզբանէ մինչև ՚ի կոշած) (Նա՛ այսպ
Ժամանակն հոլովմամբ Էօթնեակ աւ
ուրց շաբաթուն անցանէ :

Ե քանզի լուսակերտ Էթուս մեր սբ
Եջմիածին՝ է իբր գլխաւոր մասն և
